

**Գ. Նարությունյանի ելույթի տեքստը**  
**ՆՆ անկախության 20-ամյակի առիթով**  
**ՂԱՓԱՆ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2011թ.**

Միտելի հայրենակիցներ,

Այս օրերին ողջ հայությունն է նշում մեր երկրի անկախության քսանամյա տարելիցը: Ես այսպեղ եմ մեր ժողովրդի համար այս նվիրական տոնը Ձեզ հետ նշելու համար:

Շնորհավորում եմ բոլորիս:

Թերեւս հարիր չէ այունեցու, զանգեզուրցու համար անկախության խորհրդի մեկնություններ անել: Դուք, Ձեր պապերն ու որդիներն արյամբ են հունցել այս սուրբ հողը՝ այն դարձնելով հայրենիք: Դուք եւ Ձեր սերունդները հերոսապատումի բազում էջեր եք նվիրել մեր պայքարային ու ներկային՝ հայ ինքնությանը հաղորդելով անկախ ապրելու հպարտություն ու ազգային արժանապատվություն: Մարգարեական են դարձել Գարեգին Նժդեհի բարձրաձայնումներն առ այն, որ մարդու ու ազգի համար անկախ ապրելն է կյանքի իմաստավորումը, այն, իրավունք լինելուց զար, նախ պարտականություն է, որի գիտակցումն է մարդուն հայրենիքի զգացողություն հարդորդում:

Աշխարհի մեծ թե փոքր ցանկացած երկրի համար անկախության օրը մեծագույն տոն է, խորհուրդն է փվյալ ազգի ու ժողովրդի իմաստավորված գոյության ու երաշխավորված ապագայի:

Այս տոնը հայության համար շատ ավելի մեծ խորհուրդ ունի, քանի որ այն մեզանից միշտ խլել են՝ մեր տեսակի մեջ արթնացնելով անկախության

կարոտի, լինելության փազնապի, ուրիշին ապավինելու անվստահության զգացումը:

Մեր ազգային դժբախտությունն է եղել պեպրականության շարունակական կորուստը եւ հարյուրամյակներ այլոց բարեհաճությանն ապավինելը, քաղաքական մուրացկանությունը հանրային կյանքի կանոն դարձնելը: Մեր ազգային ամոթն է եղել պապմությունից անհրաժեշտ դասեր չքաղելը եւ անմիաբանության արդյունքում հերթական կորուստները ողբալը:

1500 փարի առաջ մեծ Քերթողահոր փեպրագրիչը ցավից կնճռոտվող մագաղաթի վրա հայ սերունդներին էր ուղղում երբեւէ հնչած մեծագույն փազնապը, ասելով. «Ողբում եմ քեզ, Նայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետեւ վերացան թագավորդ եւ քահանայդ, խորհրդականդ եւ ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմաքացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց փոփոխությամբ չարափառությունը»:

Պեպականության կորստի ցավը, դրա հիմնարար պապճառների բացահայտումը դժվար թե պապմության մեջ մեկ ուրիշի կողմից ավելի դիպուկ ու խոր հնչեցված լինի:

Նույն Խորենացին նաեւ մեզ պարզամում է, որ «...թեպեպ մենք փոքր ամու ենք եւ շաք սահմանափակ թվով եւ շաք անգամ օտար թագավորության փակ նվաճված, բայց եւ այնպես մեր աշխարհում էլ քաջության շաք գործեր կան գործված, գրելու եւ հիշարակելու արժանի...»:

Սրանք հայ ժողովրդի պապմական ճակատագրի երկու փարբեր կողմերի դրսեւորումներն են, որոնք նաեւ մեր սերնդի, անկախ Նայաստանի Նանրապետության ներկա սերնդի համար իրապես գործելու ու պապմական պապասխանաբովություն ստանձնելու մեծ խորհուրդ ունեն:

Այն ենթադրում է.

1. անկախությունն անանց արժեք է, կենսական ու անփոխարինելի՝ ազգային ինքնության պահպանման ու զարգացման համար,

2. անկախ ապրելու համար ազգն ու ժողովուրդը պետք է պերական մրաձողություն ու համապարասխան կազմակերպվածություն ունենան,

3. անկախ պերականությունը կայանալ ու զորանալ չի կարող, եթե նրա բնակիչներն այդ երկրի հավաքավոր ու անհրաժեշտ որակներ ուեցող քաղաքացիներ չեն,

4. այնպեղ, որպեղ չկա հաշվություն, սեր ու համերաշխություն, քիրապերողն արելությունն է ու անհաշվությունը, ուր վրդովեցվաձ է խաղաղությունը եւ քգիրքությամք չարափառություն է հասքարվում, վքանգվաձ է պերության, պերականության ու ազգի ապազան:

Սքանք են մեր պարմության դասերը, այն սերքելով պերք է դիմակայենք ժամանակի մարքահրավերներին:

Դիպուկ ու ճշմարքացի է ընքրվաձ անկախության 20-ամյակի կարգախոսը՝ «Տայասքանը Դու ես», մեզանից յուրաքանչյուրը:

Անկախ պերականության հասքարումը մեզանից պահանջում է գքնել համազգային գորձակցության համակարգային այնպիսի լուձումներ, որոնք հայ ինքնությանը նեքվաձ մարքահրավերներին դիմակայելու առավել մեձ երաշխիքներ կապահովեն: Աշխարհում քեղի ուեցող ներկավայրիվերումները, մեր շուրջ ու մեզանում սքեղձվաձ կացությունը հալությանն այլընքրանք չեն թողնում՝ կամ պերք է բռնցքվել՝ մեր ինքնության ապազան երաշխավորվաձ քեսնելու համար, կամ այն կքրվի բախքի քնահաձույքին:

Ամենից առաջ անհրաժեշտ է կարելորել այն պարազան, որ պերականության վերահասքարումն ազգային կյանքում բեկումնային քայլ է, եւ այն պահանջում է ազգային արժեքների վերաիմասքավորում եւ արժեհամակարգային հսքակ կողմնորոշում: Մենք պերականության կայացման

դժվարին ճանապարհի միայն առաջին քայլերն ենք անում: Պետականությունն ազգային զարթոնքի լուրջ նախադրյալ դարձնելու համար մեզանից պահանջվում է տեսական, կազմակերպված ու դժվարին աշխատանք՝ բնականաբար, հաշվի առնելով նաև միջազգային զարգացումների նորագույն միտումները, մեր հնարավորությունները մարդկային քաղաքակրթությանը ներդաշնակվելու կարողունակությունը:

Մենք չենք կարող վայրկյան անգամ մոռացության տալ, որ պետականության կայացման դժվարագույն ու դարերի բեռով ծանրացած խնդրի լուծման հետ մեկտեղ, մեր ազգային գերակայությունների մեջ բացառիկ տեղ ունի արցախյան հիմնահարցի արժանապատիվ ու հիմնարար լուծումը:

Մենք չենք կարող եւ իրավունք չունենք աչքաթող անել Սփյուռքում տեղի ունեցող ազգային ինքնության աստիճանական կորստի միտումները:

Մեր պատմական պարտքն ու պարասխանապնդությունն է ամուր ու անսասան հիմքեր ստեղծել հայոց անկախ պետականության կայացման ու զորացման համար, որը նաև համազգային այլ հիմնախնդիրների հաջողությամբ լուծման երաշխիքն է:

Լինել-չլինելու հրամայական է դրված ներկա հայ սերնդի, բոլորիս առջև, եւ այն պահանջում է ինքնագոհություն ու խիզախում՝ «ԵՍ»-ի կապանքներից ազատվելու ու «ՄԵՆՔ»-ի բեռն ուսելու համար: Մենք իրավունք չունենք մեր ՆԱՅԿԱԿԱՆ աշխարհի շենացմանը չտալով մեր քրտինքի կաթիլը՝ այսօր եւ վաղը մեր որդիներին կրկին ստիպել տալու իրենց արյունն ու կյանքը:

Առանց չափազանցելու կարող ենք Ձեզ հավաստիացնել, որ հայության համահավաք ներուժը չի սահմանափակվում նրա 8-10 միլիոն թվաքանակով: Այն իր մարդկային, փորձառական, քաղաքակրթական, աշխարհաքաղաքական, տնտեսական եւ բազմաթիվ այլ որակներով կրկնակի ու եռակի ավելին է, որը լիովին բավարար է հայ ինքնությանը գոյապայքարի ուղե-

րից կայուն զարգացման ուղեծիր դուրս բերելու համար: Այդ ներուժի համարեղունն ու գործադրումը համազգային ինքնակազմակերպման նոր որակ է պահանջում:

Պահանջում է նաեւ պեղականաշինությանը հավաքավոր, երդվյալ մասնակիցներ: Բոլոր ժամանակներում էլ եղել են գողեր, թալանչիներ, կաշառակերներ ու մարդկային ցեղն արաքավորող այլ թափթփուկներ: Սակայն դրանք չպետք է լինեն ազգի ու ժողովրդի դեմքը: Մեզանում էլ քիչ չեն նմանները, սակայն դրանք մեր ամոթն են: Դրանցով չէ, որ պետք է պեղություն ու պեղականություն կայանա, մեր երեխաների ու թոռների ապագան կերպովի, մեր պապերի, քույրերի ու եղբայրների շիրիմներին խաղաղություն ու հանգստություն իջնի: Դա երաշխավորելը բոլոր այն ազնիվ մարդկանց խնդիրն ու հոգու պարտքն է, ում համար ազգ, հայրենիք, ծնող, երեխա հասկացությունները պարապ խոսքեր չեն, այլ ապրելու իմաստ, կյանքի խորհուրդ, մարդ կոչվելու պարիվ: Մեր ժողովուրդը, առավել էւս պարմական Սյունյաց աշխարհը, հարուստ է հենց այդ մարդկանցով, որոնց ուժին ու նվիրումին ապավինելով գալիք սերունդներին արժանապարհիվ ապագա ու անսասան պեղականություն կժառանգենք:

Փառք ու պարիվ անկախությանն ու արցախյան հերոսապարումին իրենց կյանքը փված մեր սերնդակիցներին: Մեր խոնարհումը նրանց անմար հիշափակին:

Փառք ու պարիվ բոլոր նրանց, ովքեր անփրփունջ իրենց քարն են դնում մեր անկախության հիմնապարին: Մեր սերնդին, մեզանից յուրաքանչյուրին է պարմական բախտ վիճակվել դնելու անկախ պեղականության՝ իրեն բաժին հասած հիմնաքարը: Ձեր թոռները, նրանց թոռները փնփրելու են այդ քարը՝ ձեզանով հպարտանալու համար: Ոչ ոք իրավունք չունի նրանց ցավ պարճառել՝ այն չգրնելու կամ այդ փեղը դափարկ փեսնելու համար:

Ուրեմն եկեք դառնանք մեր պետության հավաքավոր քաղաքացիները, պետականություն կերպող ու դրանով հպարտացող քաղաքացիները, մեր պատմական պարտքն ու առաքելությունը նվիրումով կատարող քաղաքացիները:

Սիրելի բարեկամներ,

Կրկին շնորհավորում եմ անկախության 20-ամյակի կապակցությամբ, երջանկություն եմ մաղթում Ձեր ընտանիքներին, խաղաղություն ու բարօրություն՝ մեր երկրին:

Շնորհակալություն: